



## ՇԱԲԱԹԱՀԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶՈՒԵԾՅԱԿԱՆ

Ի Պուլխարիա Տարեկ. 10, Վեցամս. 5 ֆր: ԿԱՆԵՍԻԿ: Արտասահման Տարեկ. 12, Վեցամս. 6 ֆր:  
Գրութիւնք և տպութիւն: Հասցէ DIRAN PAPAZIAN YELDIZ TABIA, VARNA BULGARIE

## ԱԶԳԱՅԻՆ

Նիկիոմիդիոյ առաջնորդ Տ. Ստեփաննոս եպիսկոպոս Ատաբաղարի մէջ ազգապատկան աղօթիք մը շինելու համար պէտք եղած 1000 օսմ: ոսկին յաջողեր է հանգանակիչ յանձնաժողովոյ մը միջոցաւ հաւաքել: Աղօթիքին շինութիւնը պիտի սկսի Զատիկի տօներէն Վերջը: Այս առթիւ հրաւիրուեր է նաև Կ. Պոլսէն անդլիացի առաջնակարգ մեքենագետ Մ ճօն:

— Այս տարի երուադէմ ուխտագնացութիւն ընող ազգայնաց թիւը հասած է 1200ի, որոնց մեծագոյն մասը թրքախօս են եղեր: Ղեւոնդ եպիսկոպոս Շիշմանեան Յ անգամ քարոզ խօսեր է, մին հայերէն եւ երկուքը թուրքերէն լեզուաւ:

— Սերպ կառավարութիւնը թագազօ պատուանշանին Բ. ատիւնները նուիրած է Ալգ. Հիւանդանոցի ատենապետ Կիւլպէկեան Պատրիկ էֆէնաի:

— Ի նպատակ Որբախնամ գործին, Մարտէլի մէջ վերջերս հանգանակուած է 1155 ֆրանք եւ զրկուած է Պատարարքարան:

— Բարիդէն մեզ կը դրեն թէ, տեղւոյն հայ ուսանողներէն, զիտական աշխարհի ծանօթ Պ. Լ. Մանուէլեան, որ վերջերս անգամ ընտրուած էր Բարիդի Մարգարանական ընկերութեան, այս անգամ ալ Բարիդի բժշկական Ճափաղթէին տարեկան բրիմը շահած է իր Գաղղիացի բաղմաթիւ մրցակիցներուն մէջ առաջին հանգիստանալով, ստանալով նաեւ «Օֆիսէ տ'Աքատէմի» պատուանշանը:

— Դարձեալ Բարիդէն մեզ կը դրեն թէ Պ. Գ. Փրօֆ—Գալֆտեան, որ կ'աշակերտէ նշանաւոր երաժշտագէտ Վէնստան Տէնտի, այս օրերս «Մայր Հայաստանի» օրօր մը եղանակած է դաշնակի վրայ եւ Իշխան Լուսինեանի ծախքով ալ տղազրել տուած կը վաճառի 5 ֆրանքի: Յատկապէս կը յանձնարարենք զայն մեր երգի սիրահարներուն:



— Ի նպատակ Ազգ Հիւանդանոցի, տու-  
ներու մէջ հաստատուած գանձանակներ-  
րէն անցեալ սեպտ. ամսէն մինչև տար-  
ւոյ մարտ վերջը 147 գանձանակներու  
հասոյթը եղած է 10,921 ուկէս զրջ:

— «Արեւելք» թիֆլիսի թղթակիցը  
կը հաղորդէ հետեւեալը. «Ինչպէս յայտնի  
է, հանգուցեալ Սարգիս արքեպիսկոպոս  
Հ. Զալալեանց ասկէ տասներեւոթ տարի  
առաջ կտակած էր 25,000 ռուբլի, ու  
պայմանով որ ամբողջ 125 տարիներ ազ-  
գումարը շահու գրուելով հասնի 12 միլի-  
ոն ռուբլի: Հանգուցեալ արքեպիսկո-  
պոսը կ'արտօնէր որ այդ 125 տարիներ-  
ուն լրանալէ ետքը, գոյացած գումարը  
գործածուի վանազան կրթական և բա-  
րեգործական նպատակներու: Մինչև  
աս տարուան Ա. ամիսը, Զալալեանց արք-  
եպիսկոպոսի կտակած այդ գումարը հա-  
ւած է 78,885 ռուբլի և 91 կոպէկի:  
Գումարը կը գտնուի Մոսկվայի պետա-  
կան գանձարանին մէջ:

— Վանայ Այգեւստաններու Յայնկոյս-  
ներ թաղին մէջ, Հայ մը իր տանը պա-  
տը քակելու պահուն 700 ոսկիի գումար  
մը կը գտնէ: Այգեւստանը ասկէ 50  
տարի առաջ հոն պահած է եղեր բազ-  
մաւոր մարդուն քահանայ հայրը:

## ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՌՆԱՅԻ ՇՈՒՐՁ

Յոյզով ու հուրով բորբոքած, աւիւնով ու  
խանդով զննող, մերթ զուարթ ու յաճախ  
լալկան, գիշերային մթութեանս, ինչպէս նաև  
աննպատակ թարթափումներու անբաժան  
ընկերը Մուսան՝ (պոէ՛ պոէ՛) չը գիտեմ ին-  
չո՞ւ, պահ մը դադրեցուց իր ներշնչումներու  
տարափը, որոնք շարք մը գուշակութիւններու  
ծիլ ու ծնունդ կուտային և ինձի ալ թե թը-  
ռիչ հաղորդելու համար զանոնք «Հայելի»  
ազնիւ ընթերցողներուն այնքան խնամքով:

Վերադարձնումը բանաստեղծական օրե-  
րու, դալարը երկրի վրայ, երկինքի մըցող  
կապոյտին դէմ, (հա՛ պապամ հա՛) գար-

նան վերադարձը իր սարեւորներով ու սոխակ-  
ներով, գետակներու անպարտ կարկաշտ, ծը-  
նելաւէր կովերու որտայոյզ բառաշը, ոչխար-  
ներու խեղճուկ մայիւնը իրենց ձագուկներուն  
ի տես, բաւական չէին միթէ զրգելու ին-  
ծի, որ գիտակիս քով դնեմ նաև բնարը ու  
երգելով մեղմացնեմ աստիճան մը մարգարէ-  
ութեանց տխուր տղաւորութիւնները:

Բայց, Աստուծոյ օրուն, ի՞նչ կըսեմ... կը  
գրեմ թէ կը բանաստեղծեմ... կը նմանեմ  
այն ջուխտ մը գրողներուն, որոնք վերջին օ-  
րերս անհետնելի շաւիղի մը մէջ ինկած, մէկը  
կը գրէ գրելու համար, իսկ միւսը կը գրէ  
տեղ լեցնելու համար: Մէկը գրական քառս մը  
կը ստեղծէ հոն բանտարկելու համար հէ՛գ  
ընթերցողը ժամերով, իսկ միւսը՝ Սիինքսը,  
հաւատացեալի անկեղծ թափով մը խելքով ու  
մտքով երկնային վերնագաւառը սլացած, հի-  
նին ու նորին մէջ բաղդատութեան մը ատեն  
կը մոռնայ ինքզինքն ալ, իր եզրակացութիւն-  
ներն ալ... Մէկը հարեկը կ'օրինակէ, իսկ  
միւսը Աւետարանին կը մօտենայ ու Աստու-  
ածորդին քղանցքներուն կառչելով, ուր ու-  
րեմն ֆրանսայի մեծ բանաստեղծին քովի կը  
դնէ իր անունը:

Բայց, բայց Աստուած միայն գիտէ թէ ո՛ր  
պիտի յանգէր իր միտքը, որ՝ այն ատեն, ինչպէս  
ըսինք, շատ բարձր մթնոլորտի մը մէջ կը  
սաւառնէր միստիք գաղափարներու շուրջ և  
հետեւաբար ժամանակ չունէր եղբակացու-  
թեամբ մը իր ընթերցողներուն հետաքրքրու-  
թեանը յագուրդ տալու...:

Վերջապէս մէկը իր նպոսը կը ձօճէր,  
ընթերցողներով կը ծախսապարէր(\*) ու հե-  
տեւեալ մոտ, ջղուտ, ճարպոտ, կրակոտ ու  
յստակ Ֆուզը կ'արձանագրէր, ուրկէ՛ քանի  
մը անգամներ առանց ուշադրութեան կար-  
գալու բան մը հասկցողին լիաշուրթն կը նը-  
ւիրենք այժմէն խոչոր «պապո» մը:

«Ու ի նկատի առնելով նաև հոգեկան  
ու բարոյական տրամադրութիւնը ար-  
տասահմանի հայութեան՝ վտանգներու,

(\*) Ի ներդրութեան իմում...



ձախողութիւններու և դժբախտութեանց ցանցին մէջ դժնդակօրէն խարբալուած, փորձառութեան կծու դասերով ծեծուած, ու նաև մտաւորական կիրթ, հիւթեղ ու զօրաւոր: ուժերը որոնցմով ճախացած է ան, իսկոյն կարելի է ըմբռնել բոլոր մեծութիւնը այն օգուտին զոր ամբողջ հայութիւնը կամ ազգին ներկայ դժնէ վիճակը պիտի կրնայ ուղղակի անկից քաշել՝ երբոր սակայն անիկա լուրջ խոհականութեամբ, անկանխակալ կարծիքներով, գաղափարի, ըզգացումի, ներշնչման միօրինակ ու միատարր ներգաշնակութեամբ, յարատեւօրէն իր մտածման, իր գործունէութեան, իր հոգածութեան առարկան դարձնէ իրենց:

Իսկ միւսը աւելուս պաշտօններ շինող ճարտարագետներու պէս յղկուն բառերու կուտակումներով կը հիւսէր իր սոցալօրութեանց շէնքը, որ ներքին չէր ու է մարդու ներս մտնել տեսնելու համար թէ մէջը ե՞նչ կայ: Գրեւն ալ գոց, ելքն ալ գոց, ինքն ալ թերեւ չէր գիտեր թէ ի՞նչպէս շինուած էր մահաւնացուաց անհպելի այդ գրական պաշտօնը...

Բայց ի՞նչ հարկ երկարօրէն խօսիլ մասնաւոր գրողներու վրայ: Ատոնց ամենքն ալ իրենց աննրոյցի իրաւունքն ունին իրենց սիրած լիզուով գրելու, հերթէ է, որ նախորդ գուշակութիւններս Ժառանգին առաջին երեւոյթին մէջ իսկ կ'իրականանան ևս սունկի պէս ահաւասիկ կը բուսնին գրողներ ու թերթեր, ամենքն ալ ժողովուրդին նուիրուած, ժողովուրդին՝ որուն դրամը շատ անուշ է. հէ...:

Վատնան վառարան մը դարձաւ Հայ գրականութեան, և ես կը տեսնեմ որ այդ նախանձիկ բազմաբն հինգերորդ թերթի մը ծընունդն ալ պիտի տունէ մօտաւորապէս:

Քանի որ վառնայով զբաղուեցանք, սիրելի ընթերցող, անշուշտ կը հետաքրքրուիս հիմակունէ հասկնալ մէկ բանի գատերու ելքը, որոնք պիտի զբաղեցնեն վառնայի դատարանները ասկէ վեց ամիս յետոյ: Շատ սիրով կը խոստանամ գոհացնել Ձեր փափագը, գալ անգամ արձանագրելով իրաւունքս—Շարժումական և ճիշտաւոր—Շարժումական դատարան մանրամասնութիւնները ու հետեանքը:

Ուրիմն ցտեսութիւն,

Փ. ՊՈԼԻՍ

ԳՈՒՇԷԿԻ

## ՕՊԵՐԱԿՅԵՒԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՀՐԿԻՉՈՒՄԸ

Բարիք 17 Ապրիլ

Եղեռնակաւ ու միեւնոյն ատեն նոյնպիսի արարք մը գործուեցաւ երէկ տառու, եղն իսկ Բարիքի քիթին տակ: Աւագակներ, կողոպտիչներ, մարդասպաններ՝ որոնք լեռնային հրդսակախուսքներու խժգժութիւնները կը յիշեցունեն, հրկիզեցին ու կողոպտեցին Օպերաօփիսիէի եկեղեցին, կատարեալ պատմական շէնք մը:

Չարագործներ մտած էին եկեղեցին, կոտորած էին Ս. Կոյսին ու բոլոր սուրբերու արձանները, աղտեղութիւններով պղծած էին նուիրական պատկերները և Քրիստոսի արձանները:

Հաստատուած է որ կրակը ձգուած է հինգ վեց տեղերէ միանգամայն: Տեղ մը ամուսնի գիւղելով կրակի տուած էին, ուրիշ տեղ մը օգտուած էին Ս. Յովսէփի նուիրուած պղծատիկմատուռէ մը, ու տեղ մըն ալ Ս. Աշոխի նուիրուած մատուռէ մը: Բոլոր մասունքները տարտղնուած էին գետնին վրայ, կողոպտուած իրենց զարդերէն, ազամանքներէն, թանկագին քարերէն, ոսկիէն ու արծաթէն:

Չարագործները մտած էին նաև աւանդատունը, ուր բացեր են դրամարկղը՝ առանց զայն կոտորած ըլլալու: Այդ դրամարկղին մէջ կան եղբի արժէքաւոր առարկաներ, մատաւորապէս 10,000 ֆր.ի արժողութեամբ, ինչպէս նաև մեծ քանակութեամբ դրամ: Տարօրինակը հոն է որ չարագործները բոլոր արժէքաւոր առարկաները տանելուն հակառակ, բնաւ չեն դպչեր հնչուն դրամին ու թղթադրամներուն. ոչինչ պակաս է անուցմէ: Պարագայ մը՝ ուրկէ ոստիկանութիւնը սաւն թաղրութեան կը յանգի թէ չարագործները պարզ գողեր չեն՝ այլ կարգ մը հրէշներ, որոնք գրեթէ միմիայն հաճոյքի համար ըրած են այդ նոյնպիսի եղեռնագործութիւնը:

Ընդհանուրին կարծիքով, այս եղեռնագործութեան հեղինակները ոչնչականներ ըլլալ կը կարծուին:

Արուեստահանդէսի սկզբնաւորութեան օրերուն մէջ այս բանը շատ գէշ ազդեցութիւն բրած է ընդհանուրին վրայ:



## ՅԵԶՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԸ



Երեսուներֆինգ տարեկան էի, ու դեռ չէի կարգուեր: ծնողքս շատ կը վշտանային: Օր չէր անցնեիր որ յանդիմանութիւններու տարափ մը չի տեղարդ զլիսուս:

—Այս ի՞նչ է, կրօնէին, մինչև ե՞րբ ամուրի պիտի մնաս: Ամուրին առանց տերևի չորցած ոստ մըն է, զոր պէտք է անպատճառ կոտորել: Երբ մենք մեռնինք դուն ի՞նչ պիտի ըլլաս, քեզ ո՞վ պիտի խնամէ: Այս ընթացքովդ դուն միւր գլուխը պիտի ուտես: Միթէ կը պահպան աղջիկներ, ինչե՞ր կան: Եւ ահա կը սկսէր աղջիկներու թուահամար մը, զոր գուցէ հարիւր անգամ լսած էի: Այս ինչին աղջիկը, միամօր աղջիկ, խոշոր դրամօժիտ: Այն ինչին աղջիկը, հարուստ և ապագային ալ մեծ յոյսեր, քանի որ հօրաքոյր մը ունի որ 15 տարիէ ի վեր անկողնոյ կը ծառայէ ու ոտքին մէկն ալ գերեզմանն է: Այս նօտարի մը աղջիկ, որուն հայրը ժամտանկին դատաստանական սխալման մը զոհ եղած է, և այսօր իր խոշոր հարստութեամբ իր անդեալին վրայ թանձր բող մը ծածկուած է: Իվէթ Պրանշըրի ալ լաւ կը թուած աղջիկ մըն է, ո՛չ այնչափ հարուստ, բայց մեծ ընտանիքէ: Մարվինա Ֆրէնցուա, ճարտարապետի մը աղջիկ, բաջ երաժշտագէտ, լաւ ջնարածող (celliste): Արգեսօք ջնարը գաշնակի պէս բա՞ն մըն է, եթէ գաշնակի կը նմանի, գործիս չի գար, գաշնակը կ'ատենմ: Լիւսի Ռասքայլ, երկաթուղիի բարձր պաշտօնէի մը աղջիկը, թէ՛ գեղանի և թէ՛ տանտիկին:

Ես ալ չիօթած էի, առոնցմէ ո՛րն առնէի ու ո՞րը ձգէի. բայց ամէն բանէ աւելի երբ հարստութեան վրայ խօսք կըլլար, ջիդերուս շատ կը դպէր, վասն զի անկախ վիճակի տէր՝ դրամօժիտի աչք չունէի: Այս անունները կարելի է հարիւր անգամ կրկնուած ըլլալուն՝ անտարբեր մօտիկ կընէի: Գործերն այս վիճակի մէջ էին, երբ առաւօտ մը մօրաքոյրս և աղջիկը մեր տունը վաղեցին:

—Էմիլին համար յարմար բան մը գտանք, գոչեց մօրաքոյրս:

Էմիլը ևս եմ: —Օն, ըսի, դարձեալ ուր կ'ստնք:

—Սքանչելի պատահաւ մը, գոչեց մօրաքոյրս՝ աղջիկը:

—Այո՛, յարեց մօրաքոյրս, աղետիկ, թօնթօնիկ աղջիկ, լաւ կը թուած, ազէկ գծագրութիւն գիտէ ու բաջ կերգէ:

—Այո՛նք, ըսի, օա հաղուագիւտ մարգրիտին տնուը ի՞նչ է:

—Շարլօթ Վէրտիւրէ:

—Ու ամէն բանէ աղէկը սա է որ խոշոր դրամօժիտ ալ կայ. հայրը բանակի մատակարար էր:

—Այդ գործով, ըսի, մարդ աղքատ մընալու վախ չունի:

—Եթէ այս աղջիկն ալ չառնես, ըսաւ մօրաքոյրս, ըսել է թէ կարգուելու միտք չունիս:

—Այո՛, յարեց մօրաքոյրս աղջիկը, կըրնամ ըսել թէ Շարլօթ հրեշտակ մըն է: Դըպրօցը մէկտեղ էինք, հեղութեան մրցանակը առած է:

—Եթէ հեղութեան մրցանակը առած է, ալ խօսք չի մնար:

Ու որոշուեցաւ որ զիս ներկայացնեն:

Քանի մը օր վերջը Վէրտիւրէներէ հրաւեր մ'ստացայ: Մօրաքոյրս զիս ներկայացուց: Օր. Շարլօթ 25նոց թիսագոյն աղջիկ մըն էր, շատ գեղեցիկ: Աչքս խածաւ, իսկոյն հաւնեցայ. Նէ ալ աչքերը գետին խանարհելով՝ գլխէս մինչև ոտքերս լաւ մը դիտեց: Տարակոյս չկար, գործին տեղեակ էր: Երկրորդ այցելութիւն մը եւս, և հրաման տուին ամէն օր յաճախել: Օրիորդը լուրջ մէկը կերեէր, քիչ՝ բայց բաղքը կը խօսէր: Իրիկունները թէյ կը մեծարէին, նշանածս դաշնակին առջև կ'անցնէր, և քան ինչ կերգէր, ինչպէս կըսէր մայրը՝ Քանթրօլիճի ձայն ունէր: Նոյն միջոցին մայրն ալ աղջկան ձիւրքերը կը գովէր: Հայրը թեաթոսի մը վրայ տարածուած խոշոր սիկաններ կը ծխէր:

Իրիկուն մը ապառնի գոքանչս գիրքերով լեցուն գրագարան մը բացաւ:



—Այս գիրքերը, ըստ, աղջկանս առած մրցանակներն են, գպրոցին մէջ միշտ աւանդին եղած է: Իմ դարձանքս յայտնեցի: —Մինչև անգամ հեղուծեան մրցանակն ալ առած է:—

—Գիտեմ ըսի. —Կ'ուզե՞ս որ ցուցնեմ:

—Չեմ համարձակիր խնդրելու.

Զորանչս գիրքը ինծի երկնցուց, որու տիազոսն էր «Պատմութիւն դժբաղդ տիրութեանց». կ'երեկ թէ այս տիկնանց թիւը շատ է, բաւնի որ պատկերազարդ ստուար հատար մըն էր: Սկսեց թղթատել: Պատկերներէն մին կը ներկայացնէր ծան կրէյ՝ դահճին առջև, միւսը Մարի Սթուարթ, զլուխը կառապնարանին վրայ, ուրիշ մը Մարի—Անթուանէթը, մէկ ոտքը կիսթիւնին վրայ: Զորանչս աղջկանը առած մրցանակները մի առ մի թուեց: Ստիպուեցայ մէն մի գիրքի վրայ անարկ մը նետել և երջանիկ մօր շնորհաւորութիւններս յայտնել:

Դեռ նշանածիս հետ մասնաւոր տեսակցութիւն մը ունեցած չէի, իրիկուն մը երբ մինակ մնացած ենք, ուղեցի հասկնալ թէ ի՞նչ կը մտածէր ինծի համար: «Օրիորդ, ըսի, քանի որ քիչ օրէն էրիկդ պիտի ըլլամ, կը բաղձամ հասկնալ թէ ի՞նչ գաղափար ունիս վրաս:

—Պարոն, ըստ, ծնողքս բեզ ընդունեցան, բարեկիրթ աղջիկ մ'ալ պէտք է հնազանդի ծնողացը կամքին:

—Այս խօսքը գործիս չի գար, գոչեցի, ծնողացդ հաւանութիւնը չի բաւեր, կ'ուզեմ կարծիքդ իմանալ: Աչքերը վար առաւ. «Չըսի, պարոն, թէ ես հաւանած չեմ»:

—Ուրեմն հաւանած ես, գոչեցի, և ուրախութեամբ արքշիռ ձեռքը անկածօրէն շըրթանցս տանելով համայր մը գրոշմեցի երկու մատերուն վրայ զորս արտօրնօք չբռնէ:

Մօրեղբորս աղջիկն իրաւունք ունէր, Շարլօթ անգին գանձ մըն էր, և ես արժանի չէի ասանկ գանձի մը տիրանալու, բայց վերջապէս կ'երեկ թէ իմ բախտս է եղեր, և հարսնիքը կատարուեցաւ: Աւերտիւրէ ընտանիքը չբեղ կերպով ըրաւ ամէն բան: Ութ օր ան-

ընդհատ պարահանդէսներ, սեղաններ, երեկոյթներ իրարու յաջորդեցին: Հրաւիրեալները շատ էին: Կինս ամենուն հետ փարուելուն կերպը գիտէր, և տղի օրէն յայտնի եղաւ թէ կատարեալ սաղօնի կին մըն էր: Շատ գոհ էի:

Երբ վերջին հրաւիրեալը —ծեր զարմիկ մը, որ սիրտ չէր ընէր իրթալու, մնաս բարովը կոխեց — ո՛ւֆ, ըսի կնոջս, ալ վերջապէս ուս գլխու ցաւերէն ազատեցանք:

—Ծնողացս և ազգականացս համար այդ ընդուն չի վայելեր, ըսաւ կինս:

—Այնչափ երջանիկ եմ, ըսի գողտրիկ կերպով, ու սիկարի տուփս հանելով պատրաստուեցայ ծխել:

—Կը յուսամ թէ չես ծխեր, ըսաւ կինս

—Սիկար մը միայն, ըսի, պղտիկ սիկար մը

—Երբէք, պատասխանեց չոր կերպով.

—Նայենք, անուշիկ կինս:

—Երբէք

—Սիկարն այնչափ կը նեղէ՞ք եղի.

—Ոչ, չի նեղեր, բայց չեմ ուզեր որ ծխես:

—Հայրդ անընդհատ կը ծխէ.

—Հայրս կը ծխէ, բայց էրիկս չպիտի ծխէ: Ես մօրս չեմ նմանիր, որ եթէ գաւնուկի պէս մօրթեն, ձայն չի հաներ.

—Ասիկա իմ կինս չէ, ըսի ինքնիրենս, բողոքովին փոխուեր է.

—Մէկ տան մէջ, յարեցի, այդ և կին պէտք է որ իրարու փոխադարձաբար ներողամիտ ըլլան: Ծխելը ինծի համար վաղեմի սովորութիւն մըն է և չեմ կրնար ձգել:

—Ուզես չուզես պիտի ձգես:

—Լրջօրէն կը խօսիս թէ կատակ կ'ընես

—Ես կատակ չեմ ընէր: Ծխելդ կ'արգիլեմ. եթէ կ'ուզես փորձէ:

—Ես ալ, գոչեցի, հետս այդ կերպով խօսիլդ կ'արգիլեմ:

Խօսքս դեռ բերանս էր, և ահա ստուար հատոր մը գլխուս իջաւ: Գճկուեցայ գիրքը տանելու համար:

Ապշած ետ ետ բաշուեցայ:

—Ի՞նչ տեսնեմ, Հեղուծեան համար իր առած մրցանակն էր:

Թարգմ. Գ. Խ.

ԷՕԺԷՆ ՓՈՒՐԻԷ





## ԴԺՈՒԱՐԻՆ ԴԵՐԸ

(ՌՌՍԱՎԱՆ ԱՌԱՎ)

Էրիկ կնիկ կը վիճաբանէին շատ անգամ իրարու հետ սա կէտին վրայ թէ, տանը մէջ իրենցմէ որինի՞ն գործը աւելի ծանր էր. էրկա՞նը թէ կնո՞ջը. Էրիկը կըսէր թէ իր գործը ծանր էր. իսկ կինը հակառակը կը պնդէր.

Ամառուան օր մըն էր ու անոնք որոշեցին փոխել գերերնին. կինը դաշտը գնաց և էրիկը տունը կեցաւ.

— Ուշադրութիւն րբէ՛ք, ըսաւ կինը մեկնելէն առաջ, ժամանակին կովերը ու ոչխարները դուրս հանէ՛, վառեալ-ներուն ուտելիք տուր ու նայէ որ չկորսուին. իմ գալէս առաջ ճաշը պատրաստէ, ինչպէ՛ս նաև կարազը. կորեակը սանդահարելու ալ չմոռնաս:

Կինը այս հրամանները տալէն ետքը մեկնեցաւ.

Էրիկը՝ ամեն բանէ առաջ մինչև որ մտածեց թէ կենդանիները դուրս հանել պէտք է, արդէն նախ իրը հեռացած էր գիւղէն, ու հազիւ հազ կարողացաւ հասնել կենդանիները.

Տուն վերադարձաւ, և որպէս զի ուրուրները վառեակները չտանին, չուանով մը թեւերէն իրարու կապեցաւ ծայրն ալ տարաւ հաւուն թեւին փաթթեց.

Դիտած էր որ կինը կորեակը ծեծած ժամանակ կը շաղէր նաև խմորը. ուղեց անոր պէս ընել, և սկսաւ թէ շաղել խմորը եւ թէ ծեծել կորեակը. բայց միևնոյն ժամանակ կարագն ալ պատրաստել ուղերով. կծիճին չուանը գօտիին կապեց. — Երբ կորեակը կը ծեծուի, այս ձեւով կը պատրաստուի նաև կարագը — ըսաւ ինքնիրեն. Բայց հազիւ թէ գործի սկսած էր, երբ հաւուն «քրիքիքի» ընելուն ու վառեակ՝ երուն ճվալու ձայնը տուաւ. Ուղեց վազել բակը, հասկնալու համար թէ ի՞նչ կանչի՞ր կը դառնայ. շատ չտապելուն սոսկ թաքեցաւ, և կարողին կծիճը կտորեցաւ. բայց առանց ուշադրութիւն դարձնելու կարողին, հասաւ բակը ու տեսաւ հսկայ ուրոր մը, որ վառեակներն մին բռնած իւր կը լայն ճապնէր, ուտն ետեւէն

վեր կը համբառնային նաև իրարու կապուած միւս վառեակները ու հաւը. Երբ բերանաբաց անոնց կը նայէր, խոզը ներս գնաց, տապալեց հացին տաշտը, խմորը գետին տարածեց ու սկսաւ փառաւորապէս լափել. Ուրիշ խոզ մըն ալ իր դունչը խոթեց կորեակին մէջ.

Մեր մայրդուկը ներս երթալով երբ այս բոլոր գծրողդութիւնները տեսաւ, անճրկեցաւ մնաց, չգիտեր թէ զլուխը ո՞ր պատին զարնէ: շերկարենք, կինը արտէն վերադարձաւ ու բակին մէջ հաւերը չտեսնելով, հարցուց էրկանը.

— Ա՛յ ե՛ն վառեակները ու հաւը.

— Ուրուր մը վերադարձ ըրաւ զանոնք. թէ եւ չկորսուելու համար իրարու կապած էի, բայց այն անպիտանը ամենը մէկէն տարաւ.

— Ճաշը պատրաստ է.

— Ի՞նչ ճաշ... կրակ չկայ.

— Կարազը պատրաստեցիր.

— Բայց... ո՛չ... բակը վաղած ժամանակս ոտքս սահեցաւ կարագի կծիճին դպաւ, կծիճը կտորեցաւ, չուներն ալ կարազը կերան.

— Գետինը թափուած այս խմորը ի՞նչ է.

— Բակը եղած ժամանակս անիծած խոյերը ներս էին մտեր, մէկը տապալէր էր խմորին տաշտը, միւսն ալ կորեակին սանդը:

— Ի՞նչ աղւոր աշխատեր ես, բացագանչեց կինը. իսկ ես հերկեցի արտը ու կանուխէն վերադարձայ տուն:

— Ա՛հ, այո՛, իրաւունք՝ ունիս. բայց հոն միայն մէկ բան կար ընելիք, այն էր հերկել, մինչդեռ հոս պէտք է ամէն բան ընել մէկ անգամէն: Պատրաստէ սա, հողա՛յ այն, մտածէ ամէն բանի վերայ, ասոնց ո՞ր մէկուն հասնելու է:

— Սակայն ես կը հասնիմ ամէն օր:

— Է՛հ, այո՛, կը խոստովանիմ թէ դուն այս ա (ե՛նուն կը հասնիս:

— Ուրեմն իւրատու, և ալ մի՛ պընդեր թէ կինները գործ չունին ընելիք՝ փաւղ ը

ՓԷՅԼԻՎ



— Կը լսենք թէ «Տաւրոս» թերթը մօտ օրէն պիտի վերսկսի հրատարակուիլ միւհնոյն ուղղութեամբ:

— Տեղւոյս Ընթերցասիրաց ընկերութիւնը ստիպողաբար ի նիստ հրաւիրուած է վաղը ժամը 2, ն, աղգ. վարժարանին մէջ:

«Վէսէլօ» հայ գերաւանական խումբը վաղը իրիկուն պիտի ներկայացնէ Պուկար.— Սերպ պատերազմին առեն տեղի ունեցած հետաքրքրաշարժ դէպք մը:

Սոյն խաղը որ Զատիկ Բ. իրիկունը պիտի տրուէր, անձրեւին պատճառաւ յետաձգուած էր:

## ՏԵՂԵԳՆԵՐ

(Աժանս Բոժոժիկ եւ Ընկ.)

Գամշաթքա

Տօքթօս Պառթ—Փուռթ որ երկու տուղինա պիրա և 12 բաքէթ ալ պատրաստ սիկարէթ սպառելով 650 տողերէ բաղկացեալ մեծադորդ ամբաստանագիր մը հրապարակ նետած էր, երեք օր վերջը զայն 12ուկէս տողով հերքեց, ետ առաւ ու արժանացաւ ընդհանուր քահաբահներու:

Ուրիցա Արմօնիքա

Տեղացի քանի մը խաթուններ՝ ժամկոչ աղբօրը բացէն հական հատ կարմիր հաւկիթ խոստացան նուիրել, առաջարկելով անոր որ Զատիկ օրերուն՝ եկեղեցիին դուռները արարողութիւնը ըսկսելէ առաջ չի բանայ, որովհետեւ գաղթական տիկիները իրենցմէ առաջ

խնդրէին լմնցունելով կը շտապեն եղեր եկեղեցի դալ ու առաջ անցնիլ:

Ժամկոչ աղբարը՝ մօրտքը ձեռք առած բաւական մտածելէ ետքը սապէս պատասխանեց. «Ապլածըմ, օն բարալըգ պիր երմրթատան էօթիւրիւ պէն օ իչի եաբամամ»:

Իպրահիմ աղա

Սալաք խաթունը Զատիկի մեռելոցին օրը գերեզմանատուն գնաց մէկ քանի իրենց պէսներու ընկերակցութեամբ, պարտատերնուն շիրիմները օրհնել տալու համար: Երբ գերեզմանի մը շուրջը նստած քահանային կը սպասէին, սարսափելի տեսակէն ան առ խալուսմիշընելով, մէկ կողմ դրած «հոգու հաց»ի հէլվան ու քօլածը քթոտները սրբեցին սկրթեցին:

Մարիճա գետէն կը գրեն թէ, մօտակայ քաղաքի մը պարտիզպանուհիին հիւանդութեանը պատճառաւ անոր տունը նստող քոյրը, որ բոլորովին անտեղեակ է մանկապարտիզպանուհիութենէ, վէքեալէթէն տեղապահ կարգուեր է:

Ն Կ Ա Ր Հ Ա Ն Ո Ւ Կ

Թիւ 157րդ «Հայելի»ի նկարհանուկը կարգաւ այսպէս.

«Տիկնոջ խելացին քիչով կը լեցունէ տունը»:

զոր անսխալ կարգացին Ա. Զարպհանէլեան, Գ. Աւագեան, Յ. Էնկիպարեան, Վ. Ս. Ղուկասեան, Գարապաճագեան և Կ. Պ. Փափաղեան Վառնայէն. Կ. Յ. Մինասեան Օսման բաղարէն. Մետրոպ Տ. Յովակիմեան Տօպրիչէն. Գ. Մէլքիսէդեան Ռուսնօքէն, Եղիա Գէորգեան Պուրկաղէն և Գէորգ Համբարձումեան Սիւրիսքէն:




# ՆԷՏԱ

Պուլկար հռչակաւոր հայրենասէր գը-  
րագետ Լիւպէն Գարալէյօֆի գրած սոյն  
գիրքը կարժէ որ ամեն հայ կարգայ,  
որով բաւական որոշ գաղափար մը կը  
կազմէ Պուլկարիոյ ազատութենէն ա-  
ռաջ Պուլկար ժողովուրդին նիստուկա-  
ցին, սովորութիւններուն ու կրած տա-  
ռապանքի մասին:

Գիրքը 112 փոքրագիր երեսներէ  
կը բաղկանայ: Ստանալու համար 55  
սանդիւնի նամակագրոջմ' զրկել «Իրա-  
ւունք»ի խմբագրութեան:

Ամենաընտիր տեսակէն, բերնի հա-  
մով ապուխտ ու երչիկ ուտել ուզողնե-  
րը կը հրաւիրուին ի Մուսալլա Տ. Ե-  
ւագրի Կիւմիս շէնանի նպարավաճառա-  
տունը, ուր մասնագէտի մը ձեռքով  
պատրաստուած ապուխտ եւ երչիկ կը  
ծախուին գոհացուցիչ գինով:



Վաճառ, Բուհարաբա փողոց թիւ 112

ԲԵՐԲԵԼԻ ԿԵՕՐԿԻԲՖԻ

ՊԱՆԿԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՅԻՆ

Կը շինէ ու կը պատրաստէ ոսկիէ և  
արծաթէ ամեն տեսակ զորքեր, լա-

տիկէ (ֆառլոֆ) և արտէ նիքներ  
քլիշէներ և կալվանօ կը ստ: Ինները յոյժ  
չափաւոր:

3

Մ. 2.

## ՀՈՎԱՍՈՒՆ

Սիրուն բանաստեղծութեանց հա-  
տորիկ մըն է, ընթերցանութեան ար-  
ժանի: Գինն է 25 սանդիւմ. շատ առնող-  
ներու համար չափաւոր զեղչ: Գինել  
Զարպհանէլեան գրատուն Վառնա:

ՆՈՐ

## Ա. Զ. Մ. Ա. Տ. Ո. Ի. Ն.

Կ. ԱԶՆԱԻՐԵԱՆԻ



Սագալը չէճմէ, աղջկանց կիմ-  
նագիւնի դէմը, Վարնա:

Ոսկեզօծ, կաշեկազմ, լաթակազմ և  
թղթակազմ եւրոպական ճաշակաւ:

Դիւրամատչելի գիներ: Կը պատրաստէ  
նաեւ վաճառականական տոմարներ եւ  
դպրոցական տետրակներ:

## ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՄՈՒԲՀԱԿԸ

Թատրերգութիւն 7 արարուած

ՏԻԳՐԱՆ ՄԱՆԱՎԵԱՆ

«Գալ Վահան» սղբերգութեան հան-  
գուցեալ հեղինակին սոյն Բ. երկն ալ կը  
յանձնարարուի բանասիրաց ուշադրութեանը:  
Գինն է 1 ֆրանք: Գինել առկա մ' Մանուկ-  
եան, բոսթրէսթանթ, Վարնա:

Огговорникъ М. Сконовъ

Печатница „Взаимность“ — Варна